ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԱՐԵՆԻ
ՄԱՐԶ	ՎԱՅՈՑ ՁՈՐ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արենի համայնքը կազմավորվել է 2017 թվականի հունիսին «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Համայնքի կազմի մեջ են մտնում Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի , Գնիշիկ (Գնշիկ, Մոզրով գյուղեր) Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ նախկին համայնքները՝ Արենի կենտրոնով: Բնակավայրերից 5-ը սահմանամերձ են՝ Արենի, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ (Արենի և Խաչիկ բնակավայրերը ճանաչվել են նաև սահմանապահ):
Համայնքը հարուստ է պատմամշակութային և բնական հուշարձաններով՝ Նորավանքի վանական համալիրը /կառուց. 1339թ.,ճարտ. Մոմիկ/, սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին /կառուց. 1321 թ., ճարտ. Մոմիկ /Մագելի և Թռչունների քարանձավները:
Արենի բնակավայրում (Թռչունների /Արենի-1/ քարանձավում պեղումների ժամանակ հայտնաբերվել են աշխարհի հնագույն՝ 6500 տարվա կաշվե կոշիկ, կանացի ծղոտե զգեստ, գինու հնձան):
Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում է գտնվում պատմական Ուլգյուր գյուղատեղիի մի մասը' «Ժամի դուզը», ճարտարապետ Մոմիկի կառուցած սբ. Աստվածածին եկեղեցին, 13-րդ դար, 10-11-րդ դարերի թվագրված մահարձաններ, խաչքարեր, «Աղջկաբերդ» ամրոցը, 13-րդ դար, 14-րդ դարում կառուցված իջևանատունը:
Ագարակաձոր բնակավայրը եղել է վանքապատկան գյուղ: Այս բնակավայրում պահպանվում են 9-րդ դարում կառուցված ամրոցի ավերակներ, 12-րդ դարի խաչքարեր, Օրբելյան իշխանական տան կողմից կառուցված հուշարձաններ, 17-րդ դարում կառուցված մատուռ և եկեղեցու ավերակներ:
Արփի բնակավայրը ամենաերիտասարդ բնակավայրն է, հիմնադրվել է 1965 թվականին: Բնակավայրի վարչական տարածքում է գտնվում «Էրթիչ» հին գյուղատեղիի ավերակները, ինչպես նաև, ըստ ավանդության, բուժիչ հատկություն ունեցող «Ջրովանք» կոչվող ջրաղբյուրը՝ համանուն սրբավայրով:
Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում են գտնվում Արջերի և Մոզրովի քարանձավները, որոնք ստալակտիտային քարանձավներ են, 13-րդ դարի եկեղեցու ավերակներ, բազմաթիվ խաչքարեր, խոյերի քանդակներ:
Ելփին բնակավայրը համայնքի հնագույն բնակավայրերից է, վերաբնակեցվել է 1928 թվականին՝ Պարսկաստանի Սալմաստ գավառից եկած հայ ներգաղթյալներով: Բնակավայրի վարչական տարածքում են գտնվում հին գյուղատեղիներ, խաչքարեր, «Թուխ մանուկ» սրբավայրը:
Խաչիկ բնակավայրը, որը 3 կողմից սահմանակից է Նախիջևանին /27կմ ընդհանուր սահման/ հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ Քարկոփի կամ Խոտակերաց վանքը, Գյուղամիջի ժամը (սրբ. Աստվածածին), Ժամի Թիլ հին բնակատեղին, Մեղրաքար և Ջրաղացների բերդերը, ձիթահանի և 5-6 ջրաղացների ավերակները:
Չիվա գյուղի պատմությունը սկիզբ է առնում հեթանոսական ժամանակներից: Չիվայի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ:
Ռինդ բնակավայրի վարչական տարածքում է գտնվում Ուլգյուր հին բնակատեղիի մի մասը, ուր պահպանվում են 12-13-րդ դարերի եկեղեցու ավերակներ, խաչքարեր, մատուռներ: Վայոց ձորը ընդհանրապես, Արենի համայնքը մասնավորապես, հարուստ է պատմա-մշակութային հուշարձաներով, ունի հնագույն պատմություն, հետաքրքիր, բազմազան զբոսաշրջային վայրեր և մեծ պոտենցիալ զբոսաշրջության մակարդակը բարձրացնելու համար:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Արենի բազմաբնակավայր համայնքը գտնվում է ծովի մակարդակից 990-ից՝ Արենի բնակավայր, մինչև 2060 մետր՝ Գնիշիկ բնակավայր, բարձրության վրա: Ընդհանուր վարչական տարածքը 43785.69 հա է՝ կտրտված ռելիեֆով: Ցածրադիր, հարթավայրայինից՝ Արենի, Արփի, Ագարակաձոր, բարձրլեռնային՝ Գնիշիկ, Խաչիկ

բնակավայրեր: Համայնքի Ագարակաձոր, Արփի, Արենի բնակավայրերի միջով է հոսում Արփա գետը, որի Գնիշիկ և Ելփին վտակները հոսում են համանուն բնակավայրերի տարածքներով: Արենի համայնքն ունի բազմազան կլիմա՝ Արենիում ծաղկում է նշենին, իսկ Գնիշիկ և Խաչիկ բնակավայրերում դեռ ձմեռ է: Տեղումների քանակը տատանվում է 250-600 մմ սահմաններում: Համայնքը հարուստ է տրավերտինի, քվարցիտի հանքավայրերով (Ագարակաձոր, Արենի, Արփի, Խաչիկ), հանքային ջրերով (Ագարակաձոր, Արենի): Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի տարածքներում են աճում 400 ցեղի և 82 ընտանիքի 690 տեսակի բույսեր, որոնցից 280-ը՝ հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ: 60 տեսակի բույսեր գրանցված են Կարմիր գրքում: Հայաստանում գրանցված թռչունների 58%-ը՝ 190 տեսակ, հանդիպում են Գնիշիկաձորի տարածքում: Նորավանքի կիրճը հայտարարվել է կարևորագույն թռչնապահպանական տարածք: Հայաստանի կենդանական աշխարհի ներկայացուցիչների մեծ մասը՝ քարայծ, արջ, գայլ, աղվես, վարազ և այլն, ինչպես նաև Կարմիր գրքում գրանցված ընձառյուծը, հանդիպում են համայնքի տարածքում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մ մ)	250-600
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (₀C)	-(5-15)
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (₀C)	+(10-25)

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ)	
Ագարակաձոր	20
Աղավնաձոր	16
Արենի	0
Արփի	8
Գնիշիկ	37
Ելփին	13
Խաչիկ	21
Չիվա	5
Ռինդ	11
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Եղեգնաձոր
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1 մայրաքաղաքից (կմ)	106
3.2 մարզկենտրոնից (կմ)	16
3.3 պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	0
3.4 նախկին շրջկենտրոնից (կմ)	16
3.5 միջպետական նշանակության	0
3.6 երկաթուղային կայարանից (առկայության	40
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	996-2060
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	437.8569 / 43785.69
6. Սահմանակից համայնքների ան վանումները	Արարատ, Եղեգնաձոր, Վայք
7. Համայնքապետարանի էլ եկտրոնային փոստի	arenigyux@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.arpaareni.am

9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093417518
10. Համայքապետարանի հեռախոսահամարը	60001
11. Համայնքապետարանի հեռախոսային կոդը	0281
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	3604
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5. ԲՆԱԿՉՈՒ ԹՅՈՒ ՆԸ, ԲՆԱԿՉ ՈՒ ԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2023 թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	11703
2. Գրանցված ծնունդների քանակը	142
3. Մահացության դեպքերի քանակը	54
4. Ամուսնությունների քանակը	20
5. Ամուսնալուծությունների քանակը	1
6. Տնային տնտեսությունների թիվը	2980
7. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	-
8. Կենսաթոշակառուների քանակը	-
9. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	-

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2023թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5
5. Հանրակրթական դպրոցների քանակը	8
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2023 թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2)	240150
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	2455

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2023 թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	39885.69
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	38805.55
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1080.14
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	4043
5. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ)	1464
6. Խոզերի գլխաքանակը	556
7. Գյուղատնտեսական տեխնիկա	151
7.1 Տրակտորներ (քանակը)	119
7.2 Կոմբայններ (քանակը)	12
8. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2631

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵ Ր

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	60
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո, մասնակի (Աղավնաձոր, Ագարակ աձոր, Արփի)
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	112.8
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	60
6.2 Էքսկավատորների քանակը	10
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	20
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.6 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.7 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.8 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	26/58
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0

9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազար դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	736497.600	736497.600
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	105917	105917
2.1 հողի հարկ	33424	33424
2.2 գույքահարկ	72252	72252
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	534998.600	534998.600
3.1 դոտացիա	427718.500	427718.500
3.2 սուբվենցիա	107280,1	107280,1
4. Մուտքեր հողի օտարումից	20000	20000

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազար դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	338774.9	308674.1

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտներ (հազար դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային	126626.400	126626.400

բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազար դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	96261.8	75866.7

11.ՏԵՂԱԿ ԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	26
1.1 համայնքային ծառայողներ	19
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազար դրամ)	91223.1
3. Ավագանու անդամների թվաքանակը	15

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Ներբնակավայրային ճանապարհների հիմնանորոգում, ասֆալտապատում	Հիմնանորոգել բոլոր բնակավայրերի կենտրոնական փողոցները

Ջրահեռացման համակարգերի կառուցում / նորոգում	Հիմնանորոգել առկա ջրահեռացման համակարգերը
Ոռոգման համակարգերի բարելավում	Պարբերաբար հիմնանորոգել համայնքային ենթակայության ոռոգման համակարգերը
Խմելու ջրի մատակարարման ներքին ցանցերի հիմնանորոգում	Վերացնել վթարները, բարեկարգել բնակավայրերի խմելու ջրի մատակարարման ներքին ցանցերը